ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2019թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

### ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի ժբ) կետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ. 69-Ա որոշումը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2018 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումները Երևանի բյուջե կատարվում են եռամսյա ժամկետում (ամսական հավասար չափերով), բայց ոչ ուշ, քան մինչև հոկտեմբերի 1-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

# «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2018 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին» որոշման ընդունումը պայմանավորված է Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշման կատարմամբ:

Համայնքի սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող ընկերությունների 2018 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման համար հիմք են հանդիսացել կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև Երևանի բյուջե տարեկան շահութաբաժնի վճարման չափի առաջարկության մասին տեղեկանքներն ու զուտ շահույթի բաշխման ուղղությունների վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները:

Համայնքի սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող և գործունեություն ծավալած 58 ընկերություններից 2018 թվականի տարեկան տնտեսական գործունեության արդյունքներով շահույթով են աշխատել 48 ընկերություններ, որոնց զուտ շահույթը կազմել է 297610.5 հազ. դրամ:

Շահութաբաժնի հաշվարկման բազա է ընդունվել 275729.9 հազ. դրամը, քանի որ թվով 3 ընկերությունների («Կարմիր Բլուր» պոլիկլինիկա, «Թիվ 4 պոլիկլինիկա» «Թիվ 12 պոլիկլինիկա» ՓԲԸ-ներ) զուտ շահույթներից՝ 10542.6 հազ. դրամից շահութաբաժին չի հաշվարկվում՝ քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ մասի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետի հիմքով այդ ընկերությունների մոտ առկա են շահութաբաժինների վճարման սահմանափակումներ (զուտ ակտիվների արժեքը պակաս է կամ կպակասի կանոնադրական կապիտալից շահութաբաժինների վճարման հետևանքով), ինչպես նաև «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՓԲԸ-ի կողմից փաստացի ստացված 11338.0 հազ. դրամ զուտ շահույթից շահութաբաժին չի հաշվարկվել, քանի որ համաձայն Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունվարի 29-ի N54-Ա որոշմամբ «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՓԲԸ-ն լուծարվում է:

Երևանի բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների գումարը կկազմի 110292.0 հազ. դրամ:

Այլ հիմնադրամներին հատկացումները կատարվել են հաշվի առնելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 43-րդ հոդվածի դրույթները և կազմակերպությունների առաջարկությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2018 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2018 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
«--------» ---------- 2019թ.
N ---------- Ա որոշման

**Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2018 թվականի տարեկան զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը**

հազ.դրամ

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | 2018 թվականի տարեկան զուտ շահույթ | Համայնքի մասնակցության շահութաբաժին | Պահուստային կապիտալ | Սպառման հիմնադրամ | Այլ | Վնասների նվազեցում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն» ՓԲԸ | 4265.0 | 1706.0 | 1000.0 | 1000.0 | 559.0 | |
| 2 | «Արտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ | 1415.0 | 566.0 | | | | 849.0 |
| 3 | «Հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ | 46.0 | 18.4 | | | 27.6 | |
| 4 | «Քաղաքային Էնդոկրին դիսպանսեր» ՓԲԸ | 158.0 | 63.2 | 94.8 | | | |
| 5 | «Նոր Արաբկիր» ԱԿ» ՓԲԸ | 1250.0 | 500.0 | | 750.0 | | |
| 6 | «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ | 20318.0 | 8127.2 | | | 12190.8 | |
| 7 | «Թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ | 327.9 | 131.2 | | | | 196.7 |
| 8 | «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ | 3177.7 | 0.0 | 243.7 | | | 2934.0 |
| 9 | «Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ | 4958.3 | 1983.3 | 1500.0 | 800.0 | 675.0 | |
| 10 | «Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ | 408.0 | 163.2 | | | 244.8 | |
| 11 | «Թիվ 12 պոլիկլինիկա» ՓԲԸ | 7164.9 | 0.0 | | | | 7164.9 |
| 12 | «Թիվ 13 պոլիկլինիկա» ՓԲԸ | 8821.0 | 3528.4 | | | 5292.6 | |
| 13 | «Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ | 6282.0 | 2512.8 | 942.3 | 1884.6 | 942.3 | |
| 14 | «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ | 14459.0 | 5783.6 | | | 8675.4 | |
| 15 | «Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ | 13481.0 | 5392.4 | | | 8088.6 | |
| 16 | «Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ | 16532.6 | 6613.0 | 2400.0 | 3000.0 | 4519.6 | |
| 17 | «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ | 5023.2 | 2009.3 | 2000.0 | | 1013.9 | |
| 18 | «Նուբարաշեն» պոլիկլինիկա» ՓԲԸ | 481.0 | 192.4 | 144.3 | | 144.3 | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | «Նորագավիթ  պոլիկլինիկա» ՓԲԸ | 41.3 | 16.5 | 24.8 | | | |
| 20 | «Սարի թաղ» պոլիկլինիկա» ՓԲԸ | 1515.0 | 606.0 | 454.0 | | 455.0 | |
| 21 | «Արշակունյաց պոլիկլինիկա» ՓԲԸ | 7393.4 | 2957.4 | 4436.0 | | | |
| 22 | «Կարմիր Բլուր» պոլիկլինիկա ՓԲԸ | 200.0 | 0.0 | 200.0 | | | |
| 23 | «Արաբկիր մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ | 3252.0 | 1300.8 | | | 1951.2 | |
| 24 | «Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ | 3903.0 | 1561.2 | | | 2341.8 | |
| 25 | «Երևանտրանս» ՓԲԸ | 9276.0 | 3710.4 | | | 5565.6 | |
| 26 | «Երքաղլույս» ՓԲԸ | 32035.0 | 12814.0 | | 10622.0 | | 8599.0 |
| 27 | «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ | 3877.0 | 1550.8 | 327.0 | 1000.0 | 999.2 | |
| 28 | «Երևաննախագիծ» ՓԲԸ | 11223.0 | 4489.2 | 561.0 | 6172.8 | | |
| 29 | «Քաղաքաշինություն» ՓԲԸ | 3805.0 | 1522.0 | | 1827.0 | 456.0 | |
| 30 | «Նոր բարեկարգում» ՓԲԸ | 6555.0 | 2622.0 | 1500.0 | | | 2433.0 |
| 31 | Ջրային կառույցների  ՓԲԸ | 450.2 | 180.1 | | | | 270.1 |
| 32 | «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ | 14567.0 | 5826.8 | 730.0 | 8010.2 | | |
| 33 | «Հայ-Արտ» Մշակութային կենտրոն ՓԲԸ | 1475.2 | 590.1 | | 885.1 | | |
| 34 | «Երևանի Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՓԲԸ | 86.7 | 34.7 | 52.0 | | | |
| 35 | «Աջափնյակ-վերելակ» ՓԲԸ | 153.1 | 61.2 | | | 91.9 | |
| 36 | «Աջափնյակ-կանաչապատում» ՓԲԸ | 4755.8 | 1902.3 | | | 2853.5 | |
| 37 | «Ավան- կանաչապատում» ՓԲԸ | 2871.0 | 1148.4 | | | 1722.6 | |
| 38 | «Արաբկիր-Կամար» ՓԲԸ | 30018.2 | 12007.3 | | | 18010.9 | |
| 39 | «Դավթաշենի կանաչապատում» ՓԲԸ | 1359.0 | 543.6 | | 815.4 | | |
| 40 | «Վարդավառ զբոսայգի» ՓԲԸ | 15420.1 | 6168.0 | | | 9252.1 | |
| 41 | «Կենտրոն-կանաչապատում» ՓԲԸ | 2636.0 | 1054.4 | | | 1581.6 | |
| 42 | «Անխափան վերելակ» ՓԲԸ | 586.0 | 234.4 | | 351.6 | | |
| 43 | «Կանաչ բարձրունք» ՓԲԸ | 1690.0 | 676.0 | 500.0 | 400.0 | 114.0 | |
| 44 | «Նուբարաշեն» ՓԲԸ | 878.4 | 351.4 | | | 527.0 | |
| 45 | «Շենգավիթ-կանաչապատում» ՓԲԸ | 4229.0 | 1691.6 | 211.5 | 2325.9 | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 46 | «Քանաքեռ-Զեյթուն Բարեկարգում» ՓԲԸ | 7861.0 | 3144.4 | 1907.0 | | 2809.6 | |
| 47 | «Նոր Նորք կանաչապատում» ՓԲԸ | 5591.5 | 2236.6 | | | 3354.9 | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | 286272.5 | 110292.0 | 19228.4 | 39844.6 | 94460.8 | 22446.7 |